

## Türkiyede Ermeni Meselesi. Bir şehit Anasına Tarihini söyledikleri. Neşide Kerem Demir, Ankara.

1977 թվին մենք անդրադարձանք թուրք հեղինակներ Դելիորմանի, Յալչընի և ուրիշների հայկական հարցի պատմությանը նվիրված գրվածքներին, ցույց տալով պատմությունը կեղծելու նրանց հետևողական միտումը:

Ինչպես այդ, այնպես էլ այս նոր հրատարակությունում իշխողը անբարեխղճությունն է, հակագիտականությունը:

Հայկական գրողի կեղծագրերի հրատարակումը Թուրքիայում դրված է պետական հիմքի վրա: Մեկը մյուսի հետևից լույս են տեսնում պատմության իրադարձությունները, դեպքերը կեղծ հայելու մեջ ներկայացնող գրքեր, որոնք թուրք երիտասարդությանը նացիոնալիզմի, հակակոմունիզմի ոգով դաստիարակելու նպատակ են հետապնդում:

1976 թվականին Անկարայում լույս է տեսել գրող, ուսուցչուհի Նեշիդե Բերեն Դեմիրի «Հայկական հարցը Թուրքիայում. Սպանվածի պատմածները իր մոր» գիրքը:

Ինչպես տեսնում ենք վերնագրից, հեղինակը ընտրել է իր ասելիքը մատուցելու մի ուրույն ձև: Գրքի շարադրանքից պարզվում է, որ 1974 թվականին Կալիֆորնիայում Սանտա-Բարբարա փոքրիկ քաղաքում Մկրտիչ Յանիկյանի ձեռքով սպանված երկու թուրք դիվանագետներից մեկը իր մորը անդրբերիմյան աշխարհից պատմում է իր ընկանության պատճառների, հայ ժողովրդի «անմարդկային, զզվելի» զծերի մասին:

Գրքի առաջաբանը գրված է Լու Անջելեսի թուրքական հյուպատոսարանի սպանված հյուպատոս Մուսապինի Բահայր Դեմիրի մոր անունից: Ինչպես երևում է գրքի հետագա շարադրանքից, հակահայկական կեղծագրեր պատրաստելու տարիների փորձ ունեցող մի որոշակի կազմակերպություն կարող էր միայն թխել մի այսպիսի նողկալի գրվածք:

Նախ՝ թրքուհի «հեղինակը» ճշմարտախոս լինելու, խաղաղասեր մնալու, հայերի արյունը չոթելու խոստում է տալիս, որպեսզի հետո ամեն քալափոխ դրժի իր խոսքը, ասե-

լությունն ու թշնամանք սերմանի երկու ժողովրդների միջև:

Նա կատաղի չարությամբ է խոսում Մայլ Արլենի (Տիգրան Գույումջյան) «Մասնալար-Ռորդություն դեպի Արարատ» գրքի մասին: Նրան դուր չի գալիս, որ Մայլ Արլենը այցելել է Սովետական Հայաստան, ուսումնասիրել պատմական ճշմարտությունները և դրանց մասին պատմել աշխարհին: Թրքուհի հեղինակը այս գրքից կարծես թե ավելի շատ է նյարդայնացել, քան որդու կորստից և հայտարարում է. «Ժամանակը եկել է, որ քացենք աշխարհի ակազգները և խոսենք թուրքի բերանով»:

Գիրք-կեղծագիրը քաղկացած է երեք մասից:

Առաջին մասում հեղինակը նպատակ է հետապնդում սևացնել հայոց պատմությունը, հայ ժողովրդին վերագրել վատ զծեր, թուրքերին օժտել բարեմասնություններով ու առաքիություններով: Նա առանձնակի կըրքոտությամբ հիշատակում ու դրվատում է այն տիրակալներին, որոնք վերացրել են հայոց թագավորությունները, հայերին ցրել հեռավոր երկրներ: Այս նպատակով նա խորատուզվում է պատմության խորքերը՝ հռոմեական, բյուզանդական ու պարսկական տիրապետության ժամանակները, սելջուկյան ու օսմանյան ասպատակությունների դժգի դարերը: Հեղինակը հայերին մեղադրում է ն՛ր Բաղդեդոնի ժողովի համար, կ՛ այն բանի համար, որ XX դարի սկզբին Ստամբուլի հայկական մի թաղամասում ծագած հրդեհի ժամանակ հայոց տներից 40 դաջնամուր էին փողոց դուրս բերել: Թրքուհին հեմկում է Էսադ Ուրասի, Ուրիշհինի, Էլիզե Ռեկյուտի և այլ հեղինակների ասույթների վրա և փորձում ցույց տալ հայերի համար «Օսմանյան կայսրությունում եղած կրոնի ազատությունը», «կյանքի ապահով պայմանները»: Նա թվարկում է թուրքական պետական ծառայության մեջ բարձր պաշտոնների հասած հայազգի մարդկանց անուններ, խոսում նրանց նկատ-

մաք թուրքական մեծաճողության մասին, հայտարարում, թե «աղայությունը և թույլերի պաշտպանությունը թուրք ազգի բնավորությունն է»: Կ. Պոլիսը շփոթում գավառի կիսավայրենի կացության հետ և, ընդհանրապես, օսմանյան դժոխային իրականությունը ներկայացնում որպես մի դրախտ հայ ժողովրդի համար: Նա թուրքիան հռչակում է «փրկարար երկիր» հպատակ ժողովուրդների համար, թուրքերին՝ «բարձրաստիճան, մեծաճողի ժողովուրդ», իսկ հպատակ պալոնների ու արաբների, հայերի ու մյուսների հասցեին՝ ցեխ շարտում: Գրքում կարդում ենք, թե իբր սուլթանները հայերին շնորհել էին «սոցիալական բոլոր ազատությունները», թե վերջիններս օգտվում էին «հանգիստ ու խաղաղ կյանքի պայմաններին»: Ահավասիկ թուրք գրողի ու ուսուցչուհու խոստացած ճշմարտախոսության գոհարները: Պատմության իրողությունների փաստաբանի ու մեկնաբանի դերն ստանձնած թուրք ուսուցչուհին առանձին թշնամանքով է խոսում հաշոց ազատագրական բաղձանքների, նրանց առաջին մաքստումների, խրիմյան Հայրիկի գործունեության մասին: Նա դժգոհում է, որ հաշոց թերթեր հիսնադրվեցին, որ նրանց էջերում «հեղափոխություն ու անկախություն էին բարդում», որ թատրոնների բեմերից ինքնուրույնության ու ազատության սեր էին արթնացնում հայ մարդկանց հոգում:

Գրքի երկրորդ մասն ամբողջապես ներծծված է ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը սև գույներով ներկայացնելու, ամենաթունդ հակառուսականության ոգով: Ռուսաստանի օգնությունը պալոններին ու հայերին պատկերվում է իբրև չարիք: Նա փորձում է հայկական հարցը ներկայացնել որպես ռուսական կոնստուտի, որը ծառայելու էր Ստամբուլին տիրելու, Միջերկրական ծով դուրս գալու ցարիզմի պլաններին: Թրքուհին շփոթում է եվրոպական տերությունների իմպերիալիստական քաղաքականությունը և ճնշված ժողովուրդների հակաթուրքական ազգային-ազատագրական պայքարը: Այդպիսի դիրքերից է նա քննարկում 1878 թվականի Սան-Ստեֆանոյի ու հեղինակի պայմանագրերը, նրանցում Հայաստանին նվիրված հողվածները: «Հայկական հարցը մեջտեղ բերելով, նրանց միակ նպատակն էր կործանել Օսմանյան թուրքիան», — հայտարարում է Նեշիդե Դեմիրը:

Այնուհետև նա անդրադառնում է հայկական կոմիտեների գործունեությանը, ազգային կուսակցություններին վերագրում ռուսական պետականության քաղաքականությանը ծառայելու առաքելություն, հետո ավելացնում,

թե «ռուսները հայերի հավատարմությանը երբեք չեն հավատացել և ամեն կերպ ի շահ իրենց օգտագործել են նրանց, ենթարկելով բնաջնջման»: Ահա՛ թե ինչպիսի հրեշավոր ձև է ընդունում պատմության աղավաղումը: Եվ հետո, գրքի մյուս էջերում հեքիաթաման պատմությունների միջոցով թուրք ընթերցողին առատությամբ սուտ ու պատիր բաներ են հրամցվում, նրան տոգորում մարտաշունչ ազգայնականությամբ, անասնական թշնամանքով հայերի նկատմամբ: Գրքում կարդում ենք. «Հայերի նպատակն էր աշխարհի վրայից ջնջել թուրքերին և ստեղծել հայկական պետություն»: Ահավասիկ նման մարգանքներից մի տիպիկ օրինակ: Մյուս կողմից, գրքի էջերում այն միտքն է անցկացվում, այն էլ հետևողականորեն, թե իբր Ռուսաստանում հայերի վիճակն ավելի վատ է եղել, քան արդու-համիդյան թուրքիայում: «Հայերը չէին գիտակցում, որ թուրքիայի տիրապետությունն իրենց համար ավելի շահավետ էր, քան Ռուսաստանինը»: Հստ հեղինակի, հայերը թուրքիայում մշտապես «պատվի ու հարգանքի են արժանացել», «մուսուլմանական կրոնը միշտ էլ հեռու է մնացել շովինիստական քաղաքականությունից»: Այս դեպքում ապա ու՞ր անհետացան մոտ երեք միլիոն Լայերն այն երկրից: Այս մասին հեղինակը լռում է: Նրա լիտիությունը հասնում է այնտեղ, որ 1909 թվականի Ադանայի հայերի կոտորածը վերագրում է Ռուսաստանի քայքայիչ գործունեությանը: «Ռուսները, — գրում է հեղինակը, — վաղուց ի վեր փայփայում էին հայերի ապստամբությունը Ադանայում»: Նա ժխտում է հայերի զանգվածային կոտորածի փաստը, փորձում ապացուցել, թե ավելի շատ իբր տուժել են թուրքերը:

Գրքի էջերում ամբողջապես ծուռ հայելու մեջ է ներկայացված առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության նկատմամբ կատարված համապարփակ ոճրագործությունը:

Հեղինակը դժգոհ է, որ Ստ. Ծաֆուսյանի անունով նախ կա Սև ծովում և անդրադառնալով 1918 թվականի դեպքերին՝ Ծաֆուսյանին վերագրում է անզիհացների հետ համագործակցելու սուտը, թուրքերին կոտորելու գործը գլխավորելու հրեշավոր կեղծիքը:

Խոսելով առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած արյունոտ դեպքերի մասին, հեղինակը լրիվ շուտ է տալիս դեպքերի պատկերը, մեղավորների ու ամենդների դերերը: «Հայերի կատարած չարագործությունները Արևելյան Անատոլիայում աշխարհի պատմու-

թյամ մեջ պետք է մնան որպես սև էջեր», — անամոթաբար հայտարարում է թուրք ուսուցչուհին: Անդրադառնալով 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությանը, Սովետական Ռուսաստանի արտաքին քաղաքականության հարցերին, հեղինակը փորձում է խճողել հանրահայտ ճշմարտությունները, սովետական իշխանությանը վերագրում է էքսպանսիոնիզմ, Թուրքիան նվաճելու ձգտումներ, թուրքական պետականությունը վերացնելու նպատակներ: Նա մասնավոր չարությամբ է խոսում Չիչերինի հասցեին, նրան վերագրում է Թուրքիայից արևելյան վիլայեթները խլելու ցանկություն: Այս կեղծիքների համար հեղինակին որպես աղբյուր են ծառայել հակասովետական հայացքներով հայտնի ազգայնական Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամի Բեյի հայտարարությունները, Մոսկվայում թուրքական նախկին դեսպան Ֆուադ Ալի փաշա Ջեբետլիի հուշերը և այլ տեղեկանքի ոգ գրվածքներ: Թուրք ուսուցչուհին պաշտպանության տակ է առնում հայ ժողովրդի դահիճ Թալեաթին:

Գրքի երրորդ մասը վերնագրված է՝ «Հայերի կողմից կատարված կեղեքումները Էրզրումում և նրա շրջաններում»: Այս բաժինը նախորդների օրգանական շարունակությունն է. առարկայազուրկ պնդումներ, պատմական փաստերի աղավաղումներ, հայատյաց հայտարարություններ: Ծրինակ՝ 1918 թվակա-

նի դեպքերը, թուրքական ինտերվենցիան այնպիսի գույներով են նկարագրված, որ կարծես մեղավոր են բոլորը, բացի թուրքական մարդասպան ագրեսորներից: Լրջության և ոչ մի հետք: Ամբողջը կեղծիք է:

«Վերջին խոսքում» թրքուհի հեղինակը ցեղասպանություն կազմակերպելու մեջ մեղադրում է հայերին, փորձում է պաթետիկ հայտարարությունների միջոցով նվաճել պատմությանն անծանոթ թուրք ընթերցողների համակրանքը: Նա եզրակացնում է. «Ես կարող եմ զենք վերցնել ձեռքս, սպանել երկու հայ և ձեռք բերել «բաջ մալը» մականունը: Բայց ես դիմեցի այլ ուղու, օրյեկտիվորեն նկարագրեցի ամբողջ պատմությունը, մարդկությանը ցույց տալով իրողությունը: Եվ եթե մենք կույ տանք մեր ազգի նկատմամբ կատարված բոլոր կեղեքումները և լույս աշխարհ չհանենք դրանք, ապա մեզ սպասում է դառը նակատագիր: Ջարթնեցե՛ք»:

Հիրավի, հարկավոր է թուրք ընթերցողին զարթնեցնել ճշմարիտ գրվածքներով, ժողովուրդների միջև բարեկամություն հաստատելու անհրաժեշտության մասին ճշմարիտ խոսքով: Իսկ այսօրվա Թուրքիայում հրատառակվող գրքերով ցանկանում են բորբոքել ազգամիջյան ատելությունը, հայերի դեմ տրամադրել թուրք ժողովրդի նոր սերունդը:

Զ. ԿՐԻՎԿՈՍՅԱՆ  
Մ. ՃՈՉԱՐ